# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով փորձագիտական սարքավորումների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՓՍ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.06.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՓՍ-18/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Միկրորինգ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Սայաթ–Նովայի պող. 33/63)**
2. **«Կոմպմարկետ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. 2բ շենք, 45բն.)**
3. **«Կոմպլենդ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան,Դրոյի 48)**
4. **«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան,Հր. Քոչար 15)**
5. **<<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2)**
6. **<<Նորմա-պլյուս>>ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60)**
7. **«Դոլֆին» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան 28)**
8. **<<Երևան Տելեկոմ Սոլուշնս>>ՓԲԸ(ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1)**
9. **«Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ(ք. Երևան, Իսակովի փ. 42/4 57)**
10. **«Կոմպասս» ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Չարենցի 66)**
11. **Ջավեն Եղիազարյան Սերյոժայի ԱՁ(ՀՀ)**

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«Կոմպլենդ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի. կազմակերպության գնային առաջարկում կա հաշվարկային սխալ/ԱԱՀ-ի գումարը ճշգրիտ հաշվարկած չէ/:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը**

| Հ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «Միկրոռինգ» ՍՊԸ | «Կոմպմարկետ» ՍՊԸ | «Կոմպլենդ» ՍՊԸ | «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ | <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ | <<Երևան Տելեկոմ Սոլուշնս>> ՓԲԸ | «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ | «Դոլֆին» ՍՊԸ | <<Նորմա-պլյուս>>ՍՊԸ | «Կոմպաս» ՍՊԸ | Ջավեն Եղիազարյան Սերյոժայի ԱՁ* |
| 1 | փործագիտական ապարատային բլոկհռատորներ | 7 | 271600 | | | | | | | | 343000 | | | |
| 2 | փործագիտական ապարատային բլոկհռատորներ | 7 | 1459850 | | | | | | | | 1967000 | | | |
| 3 | փործագիտական ապարատային բլոկհռատորներ | 7 | 1120000 | | | | | | | | 1496250 | | | |
| 4 | համակարգչի կոշտ սկավառակ | 35 | 2030000 | 1204000 | 1207500 | 1215830 | 1233750 | 1265250 | 1283625 | 1286250 | 1295000 | 1312150 | 1356250 | 1784000 |

* Կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը արձանագրեց, որ.**

1. <<**Դոլֆին**>> **ՍՊԸ** -ի առաջարկած գները **1**-ին, **2**-րդ և **3**-րդ չափաբաժինների համար գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Մերժել **«Կոմպլենդ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2018թ. հունիսի 12-ին, ժամը 12:15-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 601 սենյակում:

**Քարտուղարին՝**

Մեկ աշխատանքային օրում կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ____________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Վ.Պետրոսյան

____________ Վ.Մկրտչյան

____________ Մ.Անտոնյան

____________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Մ.Մուրադյան